Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15–ի թիվ 106/2008(ԵՀ) կանոնակարգ

Համայնքի՝ գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրի մասին (վերամշակված տարբերակ)

Պաշտոնական տեղեկագիր, L 039, 13.02.2008թ., էջ 0001 - 0007

(վերամշակված տարբերակ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա հոդված 175(1)–ը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [2],

Քանի որ

1) մի շարք էական փոփոխություններ պետք է կատարվեն «Համայնքի՝ գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 2422/2001(ԵՀ) կանոնակարգում [3]: Այդ Կանոնակարգը պետք է վերամշակվի տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով,

2) էլեկտրաէներգիայի սպառումը գրասենյակային սարքավորումների կողմից կազմում է էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման նշանակալից մասը: Համայնքի շուկայում առկա տարբեր մոդելներ նույն ֆունկցիոնալ հնարավորությունների պայմաններում ունեն էներգասպառման տարբեր մակարդակներ և մեծ հնարավորություն կա օպտիմալացնելու դրանց էներգաարդյունավետությունը,

3) գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության բարելավումը պետք է նպաստի Համայնքի մրցունակության և դրա էներգամատակարարման անվտանգության բարելավմանը և շրջակա միջավայրի և սպառողների պաշտպանությանը,

4) կարևոր է խթանել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը նպատակաուղղված միջոցառումներ,

5) ցանկալի է համակարգել էներգաարդյունավետության պիտակավորման ազգային նախաձեռնությունները՝ արդյունաբերության և առևտրի վրա դրանց իրականացման նպատակով ձեռնարկված միջոցառումների բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար,

6) քանի որ նախատեսված գործողության նպատակը, այն է՝ Համայնքի գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրի համար կանոնների սահմանումը, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, այլ կարող է ավելի արդյունավետ կերպով իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Կանոնակարգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

7) 1997 թվականի դեկտեմբերի 11–ին Կիոտոյում ընդունված Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ–ի շրջանակային կոնվենցիային կից արձանագրությամբ կոչ է արվում ամենաուշը 2008–2012 թվականների ընթացքում 8%–ով կրճատել ջերմոցային գազերի արտանետումները Համայնքում: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ձեռնարկել ավելի խիստ միջոցներ Համայնքի շրջանակներում ածխաթթու գազի արտանետումները կրճատելու համար,

8) ավելին, «Շրջակա միջավայրի և կայուն զարգացման հետ կապված քաղաքականության և գործողությունների Եվրոպական համայնքի «Հանուն կայունության» ծրագրի վերանայման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 2179/98/ԵՀ որոշմամբ [4], որպես էներգետիկայի հետ կապված շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների ինտեգրման առանցքային գերակայություն, նշվեց կենցաղային տեխնիկայի էներգաարդյունավետության պիտակավորման ապահովումը,

9) «Եվրոպական համայնքում Էներգաարդյունավետության մասին» 1998 թվականի դեկտեմբերի 7–ի Խորհրդի որոշմամբ [5] կոչ արվեց ընդլայնել կենցաղային տեխնիկայի և սարքավորումների պիտակավորման պրակտիկայի կիրառումը,

10) ցանկալի է, անհրաժեշտության դեպքում, համաձայնեցնել էներգաարդյունավետության պահանջները, պիտակները և փորձաստուգման եղանակները,

11) էներգաարդյունավետ գրասենյակային սարքավորումների մեծ մասը հնարավոր է ձեռք բերել՝ կատարելով քիչ լրացուցիչ ծախսեր կամ առանց որևէ լրացուցիչ ծախսի և, հետևաբար, շատ դեպքերում կարելի է էլեկտրաէներգիայի խնայողությունից ստացված միջոցներով բավականին կարճ ժամանակահատվածում վճարել կատարված լրացուցիչ ծախսերի համար: Էներգախնայմանը և ածխաթթու գազի արտանետումների կրճատմանն ուղղված նպատակները, հետևաբար, կարող են այս ոլորտում իրագործվել տնտեսապես արդյունավետ կերպով՝ առանց սպառողների կամ արդյունաբերության համար անբարենպաստ պայմաններ ստեղծելու,

12) գրասենյակային սարքավորումների վաճառքն իրականացվում է ամբողջ աշխարհում: Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրերի համակարգման մասին Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Եվրոպական համայնքի միջև 2006 թվականի դեկտեմբերի 20–ին կնքված համաձայնագիրը [6] (այսուհետ՝ համաձայնագիր) պետք է խթանի այս սարքավորումների հետ կապված միջազգային առևտուրը և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Համաձայնագիրը պետք է իրականացվի Համայնքում,

13) ամբողջ աշխարհում օգտագործվում է էներգաարդյունավետության «Էներջի սթար» պիտակը:

«Էներջի սթար» պիտակավորման ծրագրի պահանջների վրա ազդեցություն ունենալու համար Համայնքը պետք է մասնակցի ծրագրի իրականացմանը և անհրաժեշտ տեխնիկական բնութագրերի կազմմանը:

Այդ տեխնիկական բնութագրերը ԱՄՆ–ի Շրջակա միջավայրի պաշտպանության պետական գործակալության (ԱՄՆ ՇՄՊԳ) հետ միասին սահմանելիս՝ Համայնքը, հաշվի առնելով Համայնքի էներգաարդյունավետության քաղաքականությունը և էներգաարդյունավետության հետ կապված նպատակները, պետք է ձգտի էներգախնայողության հավակնոտ մակարդակների,

14) անհրաժեշտ է կիրարկման արդյունավետ համակարգ՝ հավաստիանալու, որ գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագիրն իրականացվում է պատշաճ կերպով, արտադրողների համար երաշխավորում է մրցակցության արդար պայմաններ և պաշտպանում է սպառողների իրավունքները,

15) սույն Կանոնակարգը պետք է տարածվի միայն գրասենյակային սարքավորումների վրա,

16) «Կենցաղային տեխնիկայի կողմից էներգիայի և այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը [7] չի հանդիսանում գրասենյակային սարքավորումների հետ կապված ամենանպատակահարմար իրավական փաստաթուղթը:Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության խթանման տնտեսապես ամենաարդյունավետ միջոցը կամավոր պիտակավորման ծրագիրն է,

17) ընդհանուր տեխնիկական բնութագրերը սահմանելու և վերանայելու գործընթացին աջակցելու խնդիրը պետք է հանձնարարվի համապատասխան մարմնին՝ Եվրոպական համայնքի «էներջի սթար» խորհրդին, էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրի արդյունավետ, չեզոք իրագործումն ապահովելու համար: Խորհուրդը պետք է բաղկացած լինի ազգային ներկայացուցիչներից և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից,

18) անհրաժեշտ է ապահովել, որ գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագիրը համապատասխանեցված և համաձայնեցված լինի Համայնքի քաղաքականության առաջնայնությունների հետ և Համայնքի պիտակավորման կամ որակի հավաստագրման այլ, ինչպես օրինակ՝ «Համայնքի էկոպիտակի շնորհման մեխանիզմի մասին» 92/75/ ԵՏՀ հրահանգով և Խորհրդի 1992 թվականի մարտի 23–ի թիվ 880/92 (ԵՏՀ) կանոնակարգով սահմանված սխեմաների հետ,

19) էներգաարդյունավետության պիտակավորման ծրագիրը պետք է նաև փոխլրացնի էներգիա սպառող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու համար շրջանակ սահմանող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգի [9] համատեքստում նախաձեռնված միջոցառումները: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ «Էներջի սթար» ծրագիրը և էկոնախագծման սխեման լինեն իրար հետ համապատասխանեցված և համաձայնեցված,

20) ցանկալի է համաձայնեցնել Համայնքի «էներջի սթար» ծրագիրն՝ ըստ համաձայնագրի և Համայնքում գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության կամավոր պիտակավորման այլ սխեմաների՝ սպառողների շրջանում շփոթմունքը և շուկայական հավասարակշռության հնարավոր խաթարումը կանխելու նպատակով,

21) անհրաժեշտ է երաշխավորել «էներջի սթար» ծրագրի իրականացման թափանցիկությունը և ապահովել համապատասխան միջազգային ստանդարտների հետ դրանց համապատասխանությունը՝ Համայնքից դուրս գտնվող երկրներից արտադրողների և արտահանողների համար սխեմայի հասանելիությունը և դրանում նրանց մասնակցությունը ավելի դյուրին դարձնելու նպատակով,

22) սույն Կանոնակարգում հաշվի է առնվում Համայնքում «էներջի սթար» ծրագրի իրականացման սկզբնական ժամանակահատվածի ընթացքում ձեռք բերված փորձը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Կանոնակարգը սահմանում է համաձայնագրով սահմանված Համայնքի՝ գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրի կանոնները (այսուհետ՝ «էներջի սթար» ծրագիր):

Հոդված 2

Գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգը տարածվում է համաձայնագրի XII հոդվածի համաձայն դրանում կատարվող ցանկացած փոփոխության ենթակա՝ համաձայնագրի հավելված Գ–ում սահմանված գրասենյակային սարքավորումների ապրանքային խմբերի վրա:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) միասնական պատկերանիշ՝ նշան, որը նկարագրված է համաձայնագրի հավելված Ա–ում,

բ) ծրագրի մասնակիցներ՝ արտադրողներ, պատրաստի արտադրանք հավաքողներ, արտահանողներ, ներմուծողներ, մանրածախ առևտրով զբաղվողներ և այլ անձինք կամ մարմիններ, որոնք պարտավորություն են ստանձնել՝ խթանելու նշված էներգաարդյունավետ գրասենյակային սարքավորում հանդիսացող այն արտադրատեսակների վաճառքը, որոնք համապատասխանում են գ) կետում սահմանված ընդհանուր բնութագրերին, և որոնք որոշել են մասնակցել «էներջի սթար» ծրագրին՝ Հանձնաժողովի կողմից գրանցվելով,

գ) ընդհանուր բնութագրեր՝ էներգաարդյունավետությանը և արտադրողականությանը ներկայացվող պահանջներ՝ ներառյալ փորձաստուգման այն եղանակները, որոնք կիրառվում են՝ որոշելու համար էներգաարդյունավետ գրասենյակային սարքավորումներ հանդիսացող ապրանքատեսակների համապատասխանությունը միասնական պատկերանիշը կրելու համար սահմանված պահանջներին:

Հոդված 4

Ընդհանուր սկզբունքները

1. «Էներջի սթար» ծրագիրը պետք է, հարկ եղած դեպքում, համաձայնեցվի Համայնքում իրականացվող պիտակավորման կամ որակի հավաստագրման այլ միջոցառումների հետ, ինչպես նաև այնպիսի սխեմաների հետ, ինչպիսիք են, մասնավորապես, թիվ 880/92 (ԵՏՀ) կանոնակարգով սահմանված Համայնքի էկոպիտակավորման շնորհման սխեման, 92/75/ԵՏՀ հրահանգով սահմանված կենցաղային տեխնիկայի կողմից էներգիայի և այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելը և 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող միջոցները:

2. Ծրագրի մասնակիցները միասնական պատկերանիշը կարող են օգտագործել գրասենյակային սարքավորումներ հանդիսացող իրենց առանձին արտադրատեսակների վրա և դրանց հետ կապված գովազդային նյութերում:

3. Մասնակցությունը «Էներջի սթար» ծրագրին պետք է լինի կամավոր հիմունքներով:

4. Գրասենյակային սարքավորումներ հանդիսացող արտադրատեսակները, որոնց վրա միասնական պատկերանիշ օգտագործելու համար ԱՄՆ ՇՄՊԳ–ի կողմից տրամադրվել է թույլտվություն, համարվում են սույն Կանոնակարգին համապատասխանող, եթե բացակայում են հակառակն ապացուցող փաստերը:

5. Առանց հակասելու համապատասխանության հավաստման և համապատասխանության դրոշմանշման մասին Համայնքի որևէ կանոնին և (կամ) Համայնքի և երրորդ երկրների միջև կնքված՝ Համայնքի շուկայի մատչելիության հետ կապված միջազգային որևէ համաձայնագրին՝ սույն Կանոնակարգով նախատեսված այն ապրանքատեսակները, որոնք վաճառվում են Համայնքի շուկայում կարող են փորձաստուգման ենթարկվել Հանձնաժողովի կամ անդամ պետությունների կողմից սույն Կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Հոդված 5

Ծրագրի մասնակիցների գրանցումը

1. Ծրագրի մասնակից դառնալու համար հայտերը պետք է ներկայացվեն Հանձնաժողով:

2. Հայտատուին՝ ծրագրի մասնակից դառնալու թույլտվություն տալու մասին որոշումը կայացնում է Հանձնաժողովը, երբ հավաստիանում է, որ հայտատուն համաձայնել է ապահովել համապատասխանությունը համաձայնագրի հավելված Բ–ում ընդգրկված՝ միասնական պատկերանշանի օգտագործման ուղեցույցներին: Հանձնաժողովը «Էներջի սթարի» ինտերնետային կայքէջում հրապարակում է և պարբերաբար անդամ պետություններին է ուղարկում ծրագրի մասնակիցների թարմացված ցանկը:

Հոդված 6

Էներգաարդյունավետության չափորոշիչների խթանում

Համաձայնագրի գործողության ընթացքում Հանձնաժողովը և Համայնքի մյուս կառույցները, ինչպես նաև կենտրոնական կառավարման մարմինները, «Հանրային աշխատանքների պայմանագրերի, հանրային մատակարարման պայմանագրերի և հանրային ծառայությունների պայմանագրերի շնորհման ընթացակարգերի համակարգման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի մարտի 31–ի 2004/18/ԵՀ հրահանգի իմաստով [10], առանց հակասելու Համայնքի կամ ազգային իրավունքին և տնտեսական չափորոշիչներին, սահմանում է էներգաարդյունավետությանը ներկայացվող ոչ պակաս հավակնոտ պահանջներ, քան այդ հրահանգի 7–րդ հոդվածում սահմանված սահմանաչափերին հավասար կամ դրանցից ավելի բարձր արժեք ունեցող հանրային մատակարարման պայմանագրերի ընդհանուր բնութագրերն են:

Հոդված 7

Էներգաարդյունավետության կամավոր պիտակավորման այլ սխեմաներ

1. Անդամ պետություններում գոյություն ունեցող՝ գրասենյակային սարքավորումներ հանդիսացող արտադրատեսակների էներգաարդյունավետության կամավոր պիտակավորման այլ սխեմաները կարող են գոյակցել «Էներջի սթար» ծրագրի հետ:

2. Հանձնաժողովը և անդամ պետությունները գործում են «Էներջի սթար» ծրագրի և պիտակավորման ազգային սխեմաների և Համայնքում կամ անդամ պետություններում առկա պիտակավորման այլ սխեմաների միջև համաձայնեցումն ապահովելու նկատառումներով:

Հոդված 8

Եվրոպական համայնքի «Էներջի սթար» խորհուրդը

1. Հանձնաժողովը ստեղծում է 9–րդ հոդվածում նշված ազգային ներկայացուցիչներից և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից բաղկացած Եվրոպական համայնքի «էներջի սթար» խորհուրդը (ԵՀԷՍԽ): ԵՀԷՍԽ–ն վերահսկում է «Էներջի սթար» ծրագրի իրականացումը Համայնքի շրջանակներում և, հարկ եղած դեպքում, խորհրդատվություն և

աջակցություն է տրամադրում Հանձնաժողովին՝ համաձայնագրի IV հոդվածում նշվածի համաձայն ապահովելով դրա՝ որպես կառավարման մարմին գործառույթի իրականացումը:

2. Հանձնաժողովն ապահովում է, որ ԵՀԷՍԽ-ն, իր գործունեության իրականացման շրջանակներում, գրասենյակային սարքավորումներ հանդիսացող ապրանքային յուրաքանչյուր խմբի հետ կապված՝ հնարավորինս պահպանի այդ ապրանքային խմբի հետ առնչվող համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի, ինչպես օրինակ՝ արտադրողների, մանրածախ առևտրով զբաղվողների, ներմուծողների, շրջակա միջավայրի պաշտպանության խմբերի և սպառող կազմակերպությունների հավասարակշռված մասնակցությունը:

3. Հանձնաժողովն, ԵՀԷՍԽ-ի աջակցությամբ, դիտանցում է միասնական պատկերանիշը կրող արտադրատեսակների ներթափանցումը շուկա և գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության հետ կապված զարգացումները՝ ընդհանուր բնութագրերի ժամանակին վերանայումն ապահովելու նպատակով:

4. Հանձնաժողովը սահմանում է ԵՀԷՍԽ-ի ընթացակարգային կանոնները՝ հաշվի առնելով ԵՀԷՍԽ-ի ազգային ներկայացուցիչների տեսակետները:

Հոդված 9

Ազգային ներկայացուցիչները

Յուրաքանչյուր անդամ պետություն, հարկ եղած դեպքում, նշանակում է սույն Կանոնակարգով նախատեսված առաջադրանքների իրականացման համար պատասխանատու էներգետիկայի քաղաքականության գծով ազգային փորձագետներ, մարմիններ կամ անձինք (այսուհետ՝ ազգային ներկայացուցիչներ): Եթե նշանակված է մեկից ավելի ազգային ներկայացուցիչ, ապա անդամ պետությունները պետք է սահմանեն այդ ներկայացուցիչների համապատասխան լիազորությունները և նրանց հանդեպ կիրառելի համակարգման պահանջները:

Հոդված 10

Աշխատանքային պլանը

Հանձնաժողովը կազմում է աշխատանքային պլանը 1-ին հոդվածում սահմանված նպատակին համապատասխան: Աշխատանքային պլանը ներառում է «Էներջի սթար» ծրագրի մշակման ռազմավարությունը, որով, հաջորդող երեք տարիների համար, սահմանվում են.

ա) էներգաարդյունավետության բարելավման նպատակները՝ հաշվի առնելով սպառողի և շրջակա միջավայրի պաշտպանության և շուկա ներթափանցման բարձր չափանիշներին հետամուտ լինելու անհրաժեշտությունը, ինչին «Էներջի սթար» ծրագիրը պետք է ձգտի հասնել Համայնքային մակարդակով,

բ) գրասենյակային սարքավորումներ հանդիսացող այն արտադրատեսակների ոչ սպառիչ ցանկը, որոնք պետք է դիտարկվեն որպես առաջնայնություններ «Էներջի սթար» ծրագրում ներառվելու համար,

գ) կրթական և գովազդային նախաձեռնությունները,

դ) առաջարկություններ «Էներջի սթար» ծրագրի և անդամ պետություններում էներգաարդյունավետության կամավոր պիտակավորման այլ սխեմաների միջև համաձայնեցումն ու համագործակցություն ապահովելու համար:

Հանձնաժողովը, տարեկան առնվազն մեկ անգամ, վերանայում է իր աշխատանքային պլանը և ապահովում դրա մատչելիությունը հանրությանը:

Հոդված 11

Նախապատրաստական ընթացակարգեր տեխնիկական չափորոշիչների վերանայման համար

1. Ընդհանուր բնութագրերի և համաձայնագրի հավելված Գ-ում նշված գրասենյակային սարքավորումներ հանդիսացող ապրանքային խմբերի վերանայմանը նախապատրաստվելու նպատակով և նախքան համաձայնագրով և «Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրերի համակարգման մասին Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Եվրոպական համայնքի միջև համաձայնագրի կնքման մասին» Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի

18-ի 2006/1005/ԵՀ որոշմամբ [11] սահմանված ընթացակարգերի համաձայն ԱՄՆ ՇՄՊԳ-ին առաջարկի նախագիծը ներկայացնելը կամ դրան պատասխանելը, կատարվում են 2-5-րդ պարբերություններում սահմանված քայլերը:

2. Հանձնաժողովը կարող է ԵՀԷՍԽ-ից պահանջել առաջարկ ներկայացնել համաձայնագրի կամ արտադրատեսակի ընդհանուր բնութագրերի վերանայման համար: Հանձնաժողովը կարող է ԵՀԷՍԽ-ին առաջարկ ներկայացնել համաձայնագրի կամ արտադրատեսակի ընդհանուր բնութագրերի վերանայման համար: ԵՀԷՍԽ-ը կարող է Հանձնաժողովին առաջարկ ներկայացնել նաև սեփական նախաձեռնությամբ:

3. ԱՄՆ ՇՄՊԳ-ի կողմից համաձայնագրի վերանայման համար առաջարկ ստանալու դեպքում Հանձնաժողովը խորհրդակցում է ԵՀԷՍԽ-ի հետ:

4. Իրենց տեսակետները Հանձնաժողովին հայտնելիս, ԵՀԷՍԽ-ի անդամները հաշվի են առնում տեխնիկատնտեսական հիմնավորումների և շուկայի ուսումնասիրության արդյունքները և էներգասպառման կրճատման համար գոյություն ունեցող տեխնոլոգիաները:

5. Հանձնաժողովը, էներգասպառման կրճատման նպատակով, առանձնահատուկ ուշադրություն է դարձնում համաձայնագրի 1-ին հոդվածի, 3-րդ պարբերությամբ նախատեսված հավակնոտ մակարդակի ընդհանուր բնութագրեր սահմանելու նպատակի վրա և հաշվի է առնում գոյություն ունեցող տեխնոլոգիաները և դրանց հետ առնչվող ծախսերը: Նախքան որևէ նոր ընդհանուր բնութագրի վերաբերյալ իր տեսակետները հայտնելը՝ ԵՀԷՍԽ-ը, մասնավորապես, հաշվի է առնում էկոնախագծման ոլորտում ուսումնասիրությունների վերջին արդյունքները:

Հոդված 12

Շուկայի վերահսկողությունը և չարաշահման հսկողությունը

1. Միասնական պատկերանիշը կիրառվում է միայն համաձայնագրով նախատեսված արտադրատեսակների առնչությամբ և համաձայնագրի հավելված Բ-ում ներառված՝ միասնական պատկերանիշի օգտագործման ուղեցույցների համաձայն:

2. Արգելվում է սուտ կամ մոլորեցնող որևէ տեսակի գովազդի հրապարակումը կամ այնպիսի պիտակի կամ պատկերանիշի օգտագործումը, որը հնարավոր է շփոթել միասնական պատկերանիշի հետ:

3. Հանձնաժողովն ապահովում է միասնական պատկերանիշի պատշաճ օգտագործումը՝ նախաձեռնելով կամ համակարգելով համաձայնագրի IX հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում նկարագրված գործողությունները: Անդամ պետությունները հարկ եղած դեպքում, ձեռնարկում են գործողություններ սույն Կանոնակարգի դրույթներին համապատասխանությունը իրենց սեփական տարածքում ապահովելու համար և այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին: Անդամ պետությունները կարող են Հանձնաժողովի քննարկմանը հանձնել ծրագրի մասնակիցների՝ սկզբնական գործողությունների իրականացման համար անհամապատասխան լինելու ապացույցները:

Հոդված 13

Ուսումնասիրումը

Հանձնաժողովը, համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ, պատրաստում և Եվրոպական պառլամենտին և Խորհրդին և ներկայացնում զեկույց Համայնքում գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության դիտանցման և «էներջի սթար» ծրագրի արդյունավետության գնահատման մասին: Զեկույցում ներառված են ինչպես որակական, այնպես էլ քանակական տվյալներ «էներջի սթար» ծրագրի իրականացման արդյունքում ստացված օգուտների մասին, մասնավորապես՝ էներգիայի խնայողությունները և շրջակա միջավայրի համար օգտագործման առավելությունները ածխաթթու գազի արտանետումների կրճատման առումով:

Հոդված 14

Վերանայումը

Նախքան համաձայնագրի Կողմերի դրա՝ XIV հոդվածի 2-րդ պարբերության համաձայն համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման քննարկումը, Հանձնաժողովը գնահատում է «էներջի սթար» ծրագիրը՝ հաշվի առնելով դրա իրագործման ընթացքում ձեռք բերված փորձը:

Հոդված 15

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 2422/2001 կանոնակարգը (ԵՀ) սույնով ճանաչվում է ուժը կորցրած:

Ուժը կորցրած կանոնակարգին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Կանոնակարգին կատարվող հղումներ և դիտվում են հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 16

Եզրափակիչ դրույթներ

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակումից հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Ստրասբուրգում, 2008 թվականի հունվարի 15-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ՝

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Յ. Լենարչիչ

[1] ՊՏ C 161, 13.07.2007թ., էջ 97:

[2] Եվրոպական պառլամենտի 2007թ. հուլիսի 10-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2007թ. դեկտեմբերի 17-ի որոշում:

[3] ՊՏ L 332, 15.12.2001թ., էջ 1:

[4] ՊՏ L 275, 10.10.1998թ., էջ 1:

[5] ՊՏ C 394, 17.12.1998թ., էջ 1:

[6] ՊՏ L 381, 28.12.2006թ., էջ 26:

[7] ՊՏ L 297, 13.10.1992թ., էջ 16: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1) փոփոխված հրահանգ:

[8] ՊՏ L 99, 11.04.1992թ., էջ 1: Կանոնակարգը ուժը կորցրած է ճանաչվել Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1980/2000 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 1):

[9] ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29:

[10] ՊՏ L 134, 30.04.2004թ., էջ 114: Հանձնաժողովի թիվ 1422/2007 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 317, 5.12.2007թ., էջ 34):

[11] ՊՏ L 381, 28.12.2006թ., էջ 24:

ՀԱՎԵԼՎԱԾ

Թիվ 2422/2001 կանոնակարգ (ԵՀ) | Սույն Կանոնակարգ |

1-ին հոդված | 1-ին հոդված |

1-ին հոդված, վերջին նախադասություն | — |

2–րդ հոդված | 2–րդ հոդված |

3–րդ հոդված | 3–րդ հոդված |

Հոդված 4(1) | Հոդված 4(1) |

Հոդված 4(2) | Հոդված 4(2) |

— | Հոդված 4(3) |

Հոդված 4(3) | Հոդված 4(4) |

Հոդված 4(4) | Հոդված 4(5) |

5-րդ հոդված | 5-րդ հոդված |

Հոդված 6(1) | — |

Հոդված 6(2) | — |

Հոդված 6(3) | 6–րդ հոդված |

7-րդ հոդված | 7-րդ հոդված |

Հոդված 8(1) | Հոդված 8(1) |

Հոդված 8(2) | — |

Հոդված 8(3) | Հոդված 8(2) |

— | Հոդված 8(3) |

Հոդված 8(4) | Հոդված 8(4) |

Հոդված 8(5) | — |

9–րդ հոդված | 9–րդ հոդված |

10–րդ հոդված, առաջին պարբերություն, ներածական մաս | 10–րդ հոդված, առաջին պարբերություն, ներածական մաս |

10–րդ հոդված, առաջին պարբերություն, առաջին պարբերույթ | 10–րդ հոդված, առաջին պարբերություն, ա) կետ |

10–րդ հոդված, առաջին պարբերություն, երկրորդ պարբերույթ | 10–րդ հոդված, առաջին պարբերություն, բ) կետ |

10-րդ հոդված, առաջին պարբերություն, երրորդ պարբերույթ | — |

— | 10–րդ հոդված, առաջին պարբերություն, գ) կետ |

10–րդ հոդված, առաջին պարբերություն, չորրորդ պարբերույթ | 10–րդ հոդված, առաջին պարբերություն, դ) կետ |

10–րդ հոդված, երկրորդ պարբերություն, առաջին նախադասություն | 10–րդ հոդված, երկրորդ պարբերություն |

11-րդ հոդված, առաջին պարբերություն | Հոդված 11(1) |

11-րդ հոդված, 1–ին կետ | Հոդված 11(2) |

11-րդ հոդված, 2–րդ կետ | Հոդված 11(3) |

11-րդ հոդված, 3–րդ կետ, առաջին նախադասություն | Հոդված 11(4) |

11-րդ հոդված, 3–րդ կետ, երկրորդ նախադասություն | Հոդված 11(5), առաջին նախադասություն |

— | Հոդված 11(5), վերջին նախադասություն |

12–րդ հոդված | 12–րդ հոդված |

13-րդ հոդված | — |

— | 13-րդ հոդված |

14-րդ հոդված, առաջին պարբերություն | 14-րդ հոդված |

14-րդ հոդված, երկրորդ պարբերություն | — |

— | 15-րդ հոդված |

15–րդ հոդված | 16–րդ հոդված |

Հավելված | — |